ՈՒՂԵՑՈՒՅՑ

մարտական գործողությունների կամ դրանց հարակից տարածքներում լրագրողական գործունեություն ծավալող ԶԼՄ ներկայացուցիչների համար

Սույն ուղեցույցը հստակեցնում է ճգնաժամային իրավիճակներում՝ մարտական գործողություններով զուգորդված սահմանային իրադրության կտրուկ սրման ընթացքում զանգվածային լրատվության միջոցների աշխատանքի հիմնական սկզբունքները:

Ուղեցույցը միտված է օգնելու լրատվամիջոցների ներկայացուցիչներին առավել անվտանգ և ճիշտ լուսաբանելու ստեղծված իրադրությունը, ԶՈՒ գործողությունները, չթիրախավորվելու հակառակորդի կողմից, չհրապարակելու գաղտնիք պարունակող կամ հակառակորդի համար հետաքրքրություն ներկայացնող, մարտական գործողությունների ընթացքի վրա ներազդելու հնարավորություն ստեղծող տեղեկություններ:

1. Ճգնաժամային իրավիճակներում կապ հաստատել բացազատվող Տեղեկատվական կենտրոնի հետ և անցնել հավատարմագրման ընթացակարգ՝ ստանալով անցագիր: Հակառակ պարագայում հավատարմագրում չանցած ԶԼՄ ներկայացուցչին թույլ չի տրվի մուտք գործել մարտական գործողությունների և հարակից տարածքներ:

2. Հավատարմագրում անցնելուց հետո ստանալ սույն ուղեցույցը, ծանոթանալ և հաստատել համապատասխան ձևաթղթում, որ տվյալ ԶԼՄ ներկայացուցիչը ծանոթացել է ուղեցույցում տեղ գտած կանոններին և պարտավորվում է պահպանել դրանք:

3. Մարտական գործողությունների կամ հարակից տարածքներում տեղաշարժն իրականացնել բացառապես Տեղեկատվական կենտրոնի ղեկավարությանը տեղեկացնելու և թույլտվություն ստանալու դեպքում՝ խուսափելով կամայական որոշումների կայացումից, քանի որ ԶԼՄ ներկայացուցիչը կարող է չտիրապետել տվյալ տարածքում մարտական գործողությունների ընթացքի կամ հնարավոր զարգացումների վերաբերյալ տեղեկությունների և հայտնվել սեփական կյանքի կամ առողջության համար վտանգավոր իրադրություններում:

4. Առաջնագիծ նկարահանումների մեկնելիս պարտադիր պետք է ունենալ անհրաժեշտ փաստաթղթեր՝ անձնագիր, լրագրողի վկայական և հավատարմագրման հիման վրա տրված անցագիր:

5. Նկարահանումների մեկնելիս անհրաժեշտ է այնպես կայանել ավտոմեքենան, որ անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի արագ լքել տարածքը: Վտանգի պարագայում (հրետակոծություն, գնդակոծություն, ԱԹՍ-ի հայտնաբերում) չի թույլատրվում պատսպարվել ավտոմեքենայում. այն առավել հեշտ թիրախ է խոցման համար:

6. Առաջնագիծ նկարահանումների մեկնելիս անհրաժեշտ է ունենալ դեղատուփ, որտեղ կլինեն առաջին օգնության համար անհրաժեշտ պարագաներ, դեղորայք:

7. Առաջնագիծ նկարահանումների մեկնելիս ցանկալի է ունենալ սննդի հավելյալ չափաբաժին, մասնավորապես շշով ջուր, չոր սնունդ կամ շոկոլադե սալիկներ, քանի որ, ըստ իրադրության, մարտական գործողությունների կամ հարակից տարածքներից վերադառնալու ծրագրված ժամկետները կարող են կտրուկ փոփոխվել:

8. Առաջնագծում պարտադիր պետք է կրել զրահաբաճկոն և սաղավարտ, որոնք պետք է տարբերվեն զինվորական զրահաբաճկոնից՝ մուգ, ցանկալի է կապույտ գույնով: Զրահաբաճկոնի առջևի և հետևի մասում, ինչպես նաև սաղավարտին անհրաժեշտ է ունենալ **«PRESS»** բառով տարբերանշան:

9. ***Արգելվում է*** կրել զինվորական համազգեստ. այն ՀԼՄ ներկայացուցչին մեխանիկորեն վերածում է թիրախի:

10. ***Խստիվ արգելվում է*** կրել զենք, քանի որ զենք կրող յուրաքանչյուր քաղաքացի, այդ թվում նաև լրագրողը, հակառակորդի համար մեխանիկորեն վերածվում է թիրախի, իսկ գերի ընկնելու դեպքում նրա հետ կարող են վարվել որպես ռազմագերու:

11. ***Արգելվում է*** առաջնագծում տեսանկարահանել, ցուցադրել կամ որևէ տիպի տեղեկություններ հաղորդել մարտական տեխնիկայի շարժի վերաբերյալ: Մարտական տեխնիկայի քանակի, տեղակայման վայրի կամ շարժի վերաբերյալ ցանկացած տեղեկատվության հրապարակում ուղղակիորեն նպաստում է հակառակորդի գործողությունների արդյունավետությանը:

12. ***Արգելվում է*** նշել զորամասերի իրական անվանումները, տեղակայման վայրերը կամ մանրամասն ներկայացնել դիրքերի տեղանքը, կողմնորոշիչները:

13. ***Արգելվում է*** ռազմական գործողությունների անցկացման վայրերից կապի որևէ տեսակով ուղիղ եթեր դուրս գալը: Ուղիղ եթերը բացառում է լուսաբանման ընթացքում գաղտնիք պարունակող տեղեկությունների չհրապարակման վերահսկելիությունը՝ հնարավորություն տալով հակառակորդին իրական ժամանակում ստանալ աուդիովիզուալ տվյալներ, որոնք կարող են օգնել իրեն մարտական գործողությունների վարման ընթացքում:

14. ***Արգելվում է*** հրապարակել լուսանկարներ, քարտեզներ, տեսանյութեր, որտեղ երևում են հրամանատարական կետեր, կրակակետեր, ինչպես նաև դրանց կողմնորոշիչներն ու համայնապատկերը:

15. ***Արգելվում է*** ԶԼՄ ներկայացուցիչների մուտքը սպառազինության և ռազմական տեխնիկայի, հրթիռների, զինամթերքի, պայթուցիկ նյութերի, դյուրավառ հեղուկների, վառելիքաքսուքային նյութերի պահեստներ:

16. ***Արգելվում է*** ԶԼՄ ներկայացուցիչների ծանոթացումը ԶՈՒ ստորաբաժանումների ցանկացած ներքին գրագրության հետ: Դրանց հրապարակումը անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել բացառապես Տեղեկատվական կենտրոնի, ՊՆ Տ և ՀԿԳ վարչության կամ ՊՆ մամուլի քարտուղարի կողմից:

17. ***Արգելվում է*** խոշոր պլանով ցուցադրել զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողի, ով խոցել է հակառակորդի ռազմական տեխնիկա կամ մարտի դաշտում ցուցաբերել է բացառիկ հերոսություն:

18. Մարտական գործողությունների ժամանակ զոհերի, վիրավորների կամ ռազմագերիների մասին տեղեկություն հրապարակելիս անհրաժեշտ է հիմք ընդունել բացառապես ՀՀ ՊՆ պաշտոնական հաղորդագրությունները:

19. ***Արգելվում է*** գրառումներ կատարել սոցցանցերում առանց անջատելու էլեկտրոնային սարքի (բջջային հեռախոս, նոթբուք և այլն) տեղորոշման հնարավորությունը:

20. Պատերազմական գոտում բջջային հեռախոսից անհրաժեշտ է օգտվել ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Հակառակորդը հեշտությամբ կարող է գաղտնալսել հեռախոսը և տեղորոշել այն օգտագործողի գտնվելու վայրը՝ նրան հեշտ թիրախ դարձնելով:

Եթե տեսա- կամ լուսանկարահանումն իրականացվում է հեռախոսով, ապա անհրաժեշտ է տվյալ սարքն օգտագործել «ավիա» ռեժիմով (Airplane mode):

Աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է հիշել ամենակարևոր կանոնը՝ մարդու կյանքն անհամեմատ արժեքավոր է, քան լավագույն ռեպորտաժը կամ հոդվածը: Տեղեկատվության ձեռքբերման համար պետք չէ վտանգել ո՛չ ուրիշների, ո՛չ էլ ձեր կյանքը:

Օգտակար տեղեկատվություն

Ջոկ – մարտական ստորաբաժանում՝ բաղկացած 7-9 զինծառայողից:

Դասակ – ստորաբաժանում, որը բաղկացած է երեք ջոկից: Դասակները լինում են հրաձգային, մոտոհրաձգային, հրետանային, կապի, տանկային և այլն:

Վաշտ – մի քանի դասակից կազմված մարտավարական ստորաբաժանում: Վաշտում ծառայում է մոտավորապես 100 մարդ:

Գումարտակ – զորքի ստորաբաժանում, որը բաղկացած է մի քանի վաշտից:

Դիրք – հատված, որը պաշտպանում է ջոկը:

Հենակետ – հատված, որը պաշտպանում է դասակը, վաշտը:

Պաշտպանական շրջան – հատված, որը պաշտպանում է գումարտակը:

Պաշտպանության տեղամաս – հատված, որը պաշտպանում է գունդը, բրիգադը:

Գնդակոծություն – հրաձգային զենքերից արձակված կրակ:

Հրետակոծություն – հրետանային համակարգի զենքերից արձակված կրակ:

Ռմբակոծություն – օդանավից, ուղղաթիռից արձակված կրակ:

Անկանոն հրաձգություն – զենքերից ոչ նշանառու և ոչ նպատակային կրակի վարում:

Առաջնագիծ – պաշտպանական գծի՝ հակառակորդի դիմաց ամենամոտ տեղամասը:

Դիվերսիոն թափանցում – շարժական խմբերի (հատուկ նշանակության զորքերի, հրաձգային, մոտոհրաձգային, տանկային, օդադեսանտային) ներթափանցում հակառակորդի թիկունք՝ նրան կորուստներ պատճառելու, կարևոր օբյեկտներ ոչնչացնելու, հաղորդակցության ուղիները խաթարելու նպատակով:

Զինված պայքար – պատերազմում պայքարի հիմնական և վճռական ձև: Զինված ուժերի և այլ ռազմականացված կազմավորումների կազմակերպված կիրառում՝ որոշակի քաղաքական, ռազմական և տնտեսական նպատակների հասնելու համար: Տարբեր ծավալի ռազմական գործողությունների ամբողջություն, որ վարվում են տարածական և ֆիզիկական բոլոր տիրույթներում: Զինված պայքարը կարող է մղվել ռազմավարական, օպերատիվ և սահմանափակ ծավալներով՝ օպերացիաների, ճակատամարտերի և մարտերի տեսքով:

Զորաշարժ – զորքի կազմակերպված տեղաշարժ՝ մարտի ընթացքում հակառակորդի նկատմամբ նպաստավոր դիրք զբաղեցնելու, ուժերի և միջոցների անհրաժեշտ խմբավորում ստեղծելու, ինչպես նաև հակառակորդի կարևորագույն խմբավորումների և օբյեկտների առավել արդյունավետ խոցման համար հարվածներն ու կրակը տեղափոխելու կամ վերանշանառելու (կենտրոնացնելու, բաշխելու) նպատակով: Զորաշարժի տեսակներն են թևանցումը, շրջանցումը, նահանջը և հարվածներով ու կրակով խուսավարումը:

Ճակատամարտ – մարտական գործողության բաղկացուցիչ մաս: Այն մեկ օպերատիվ խնդրի լուծման համար ընդհանուր մտահղացմամբ միավորված և զորքի որոշակի խմբավորումների անցկացրած մի շարք մարտերի, հարվածների ամբողջություն է:

Մարտ – զորքի մարտավարական գործողությունների հիմնական ձև է՝ զորամիավորումների, զորամասերի և ստորաբաժանումների՝ ըստ նպատակի, տեղի ու ժամանակի կազմակերպված և համաձայնեցված հարվածներով, կրակով ու զորաշարժով հակառակորդին ոչնչացնելու, նրա հարվածները հետ մղելու և սահմանափակ շրջանում, կարճ ժամանակում այլ խնդիրներ լուծելու համար: Մարտը կարող է լինել համազորային, հակաօդային և օդային:

Մարտական գործողություններ – միավորումների ու զորամասերի կազմակերպված գործողություններ՝ առաջադրված խնդիրները լուծելու համար: Կիրառվում են գործողության տարբեր ձևեր և եղանակներ: Մարտական գործողությունների հիմնական տեսակներն են պաշտպանությունն ու հարձակումը:

Մարտական դիրք – զորքերի զբաղեցրած կամ զբաղեցման համար նախապատրաստված տեղանքի գոտի: Մարտական դիրքերը որպես կանոն կահավորվում են ինժե-

ներական առումով և հանդիսանում են խորը շարակարգված պաշտպանական գոտիների բաղկացուցիչ մաս՝ վերջիններիս մեջ տեղակայվելով ճակատով և խորության որոշակի կարգով:

Պատերազմ – պետությունների, ժողովուրդների, ազգությունների, սոցիալական խմբերի միջև սոցիալ-քաղաքական, տնտեսական, կրոնական, տարածքային և այլ հակասությունները ռազմական բռնության միջոցով լուծելու ծայրահեղ ձև: Պատերազմի վարման գլխավոր միջոցն են զինված ուժերը և ռազմականացված այլ կազմավորումները:

Ռազմական գործողություններ – օպերատիվ և ռազմավարական օղակում զորքի, ուժերի ու միջոցների կազմակերպված կիրառում: Ներառում է նաև զորքի տեղաշարժի բոլոր տեսակները և համակողմանի ապահովման միջոցառումների համալիրը: Ռազմական գործողությունները պատերազմում զինված պայքարի հիմքն են: Ռազմական գործողությունները վարվում են արշավների և օպերացիաների տեսքով:

Տարաշարժ – մարտական գործողությունների նախապատրաստման և վարման ժամանակ զորքի որոշակի մասի կազմակերպված տեղափոխում նոր ուղղության վրա, ինչպես նաև կրակի, հրթիռային զորքերի և ավիացիայի հարվածների տեղափոխում:

Օգտագործվում են նաև ընդհանուր տերմիններ, ինչպես օրինակ՝ «օպերատիվ ուղղություն», «զինված ուժերի կանոնավոր զորամասեր և ստորաբաժանումներ», «զինված ուժերի հրամանատարություն», «ՀՈՒ պահեստային ուժեր», «օպերացիոն խմբավորում» և այլն:

Հակամարտության գոտում աշխատող լրագրողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հիմնական փաստաթուղթը Ժնևի 1949 թ. կոնվենցիան է՝ 1977 թ. լրացում-արձանագրություններով: Ցանկալի է, որ հակամարտություններ լուսաբանող յուրաքանչյուր լրագրող իմանա դրանց հիմնարար սկզբունքները և արձանագրի ու հրապարակի խախտումները, այդ թվում՝ ռազմական հանցագործությունները: Բացի այդ, փաստաթղթի կետերի մի մասը վերաբերում է լրագրողների իրավունքներին: Համաձայն Ժնևի կոնվենցիայի՝ զինված բախումների գոտում մասնագիտական պարտքը կատարող լրագրողները պետք է դիտվեն որպես քաղաքացիականներ, եթե նրանք այս կարգավիճակին

հակասող որևէ քայլ չեն կատարել, օրինակ, եթե նրանք զինվորական համազգեստ չեն հագել կամ զենք չեն վերցրել:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը նույնպես պարբերաբար իր մտահոգությունն է հայտնում լրագրողների ազատության և անվտանգության առնչությամբ: Անվտանգության խորհրդի վերջին փաստաթուղթն ընդունվել է 2015 թ.-ին: Դրանում կոչ է արվում պետություններին քայլեր ձեռնարկել լրագրողներին պաշտպանելու, մարտական գործողությունների ժամանակ չթիրախավորելու ուղղությամբ, իսկ գերեվարվելու պարագայում նրանց վերաբերվել որպես քաղաքացիական անձանց: Լրագրողների անվտանգության հարցերով զբաղվում է նաև Կարմիր խաչի միջազգային կազմակերպությունը (ԿԽՄԿ): Մասնավորապես սկսած 1985 թ.-ից՝ կազմակերպությունում գործում է թեժ գիծ (այժմ նաև օնլայն տարբերակով՝ ICRC.org կայքում) այն լրագրողների համար, որոնք հայտնվել են անելանելի իրավիճակում: ԿԽՄԿ-ն բացառապես մարդասիրական օգնություն է ցուցաբերում: Ոչ միայն լրագրողները, այլև նրանց գործատուները կամ հարազատները կարող են դիմել կազմակերպությանը և խնդրել աջակցություն: Նման իրավիճակներում ԿԽՄԿ-ն կարող է տարատեսակ աջակցություն ցուցաբերել՝ ստանալ տեղեկություն լրագրողի հավանական ձերբակալության մասին, տրամադրել տեղեկություն լրագրողի գտնվելու վայրի մասին, իրականացնել ակտիվ որոնողական աշխատանք կամ էլ առաջին օգնություն ցուցաբերել վիրավորված լրագրողներին: